ՊԱՈԼՈ ԿՈՒՆԵՈ

Հռոմում իր հիմնադրած «Հայկական ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնում» աշխատելիս, կյանքի 59-րդ տարում հանկարծամահ եղավ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, Թորոս Թորամանյանի անվան մրցանակի դափնեկիր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ Պաոլո Կունեոն։ Հայ մշակույթը կորցրեց իր լավագույն բարեկամներից մեկին, որը ողջ դիտական-ստեղծագործական կյանքը նվիրաբերեց Հայաստանի միջնադարյան ճարտարապետության հետազոտման և այն միջազգային ճանաչման հասցնելու գործին։

Պրոֆեսոր Կունեոն 1965 թ. սկսած կազմակերպել է բազմաթիվ գիտարշավներ ինչպես Հայաստանի Հանրապետություն, այնպես էլ Արևմտյան Հայաստան, ուսումնասիրել Թուրքիայի տարածքի հայ մասնագետների համար անմատչելի հայկական հուշարձանները՝ իր հավաքած բոլոր նյութերը սիրով տրամադրելով հայ գիտնականներին։ Հռոմի համալսարանում իր վարած ճարտարապետության պատմության դասընթացում նա մտցրեց նաև հայկական ճարտարապետության բաժինը՝ իտալացի ապագա ճարտարապետներին ծանոթացնելով Հայաստանի բազմազարյան մշակույթի կարևորագույն ճյուղի՝ շինարարական արվեստի նվաճումներին։ Նրա ջանքերի շնորհիվ հայ ճարտարապետության ուսումնասիրման գործում ներգրավվեցին նոր ուժեր, և Իտալիան, հիրավի, դարձավ Արևմուտքում այդ բնագավառի առաջատար կենտրոնը։

Պրոֆեսոր Կունեոյի և իր գործընկերների կողմից հայկական, մինչ այդ անհայտ կամ քիչ ուսումնասիրված, հանգուցային հուշարձանները գիտական շրջանառության մեջ դնելը թույլ տվեց անելու այնպիսի սկզբունքային ընդհանրություններ, որոնք սահմանեցին հայ ճարտարապետության ուրույն տեղն ու դերը համաշխարհային մշակույթի պատմության մեջ։ Նա 1970 թ. աշխարհի գիտական հանրության ուշադրությունը սևեռեց հին Հայաստանի մայրաքաղաք Անիի հուշարձանների պահպանման ու վերանորոգման կարևորության վրա՝ կոչ անելով այդ գործի համար ստեղծել միջազգային կենտրոն։ Պաոլո Կունեոն հեղինակն է հայ ճարտարապետությանը նվիրված մի շարք գրքերի և մեծաթիվ ուսումնասիրությունների, որոնք լույս են տեսել տարբեր երկրների ճանաչված գիտական հանդեսներում։ Նրա հեղինակած գրքերից են բացառիկ գիտական արժեք ունեցող «Անիի՝ միջնադարյան Հայաստանի ճարտարապետական դպրոցը» մենագրությունը (Հռոմ, 1977), Արևմտյան Հայաստանում առաջին անգամ իր իսկ ուսումնասիրած հուշարձանների՝ Թուղի, Փաշվանքի 5-րդ դ. բազիլիկներին և Հոգեացվանքի համալիրին նվիրված ուսումնասիրությունը (Հռոմ, 1979), համահեղինակն է «Անի» (Միլան, 1984) և «Ղարարաղ» (Միլան, 1988) գրքերի։

Հայ մշակույթին նվիրված այս ականավոր գիտնականի քսանհինգամյա հետազոտության պսակը դարձավ «Հայկական ճարտարապետությունը 4—19 դարերում» շուրջ հազար էջանոց երկհատոր հիմնարար աշխատությունը (Հռոմ, 1988)։ Գիրքը տալիս է հայկական միջնադարյան ճարտարապետության համապատկերը՝ գիտականորեն ճշգրիտ, ինքնուրույն և ինքնատիպ մեկնաբանություններով։ Այստեղ ներկայացված են ինչպես նախկին Խորհրդային Միության տարածքում, նույնպես և Թուրքիայում ու Իրանում գտնվող Հայկական բոլոր հուշարձանները՝ մասնագիտական խորունկ վերլուծություններով և բնութագրումներով։ Այս կոթողային աշխատության համար Կունեոն արժանացավ ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակի, որը նրան հանդիսավոր կերպով հանձնվեց 1990 թ. մայիսին Զվարթնոցում։ Իսկ հայ մշակույթին նվիրված իր երեսնամյա բեղմնավոր գիտական աշխատանքի և այդ բնագավառում ներդրած պատկառելի ավանդի համար Պաոլո Կունեոն 1994 թ. ընտրվեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ։

Պրոֆեսոր Պաոլո Կունեոյի մահն անփոխարինելի կորուստ եղավ հայագիտության համար և խոր վիշտ պատճառեց իր հայ գործընկերներին, որոնց մեջ այդ բացառիկ հմայիչ մարդը մեծ սեր, համակրանք ու հարգանք էր վայելում։

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ նումանիտար
գիտություններ բաժանմունք
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ